ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԳԱՎԱՌԸ 1920թ. ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԳՊՀ պատմության ամբիոնի վարիչ

Խորհրդահայ պատմագիտությունը բազմիցս անդրադարձել է մայիսյան ապստամբության պատճառների և հետևանքների լուսաբանմանը: Այդ հարցին նվիրվել է պատմագիտական ու հուշագրական մեծածավալ գրականություն[1], բայց և այնպես հայ պատմագիտական ու քաղաքական միտքն առայսօր դրան անկողմնակալ գնահատական չի տվել: Ժամանակին կային և այսօր էլ կան հիմնահարցի վերաբերյալ իրարամերժ երկու տեսակետ: Մայիսյան ապստամբության հիմնահարցն ուսումնասիրելու խորհրդահայ պատմաբանների մեթոդոլոգիան հանգել է դասակարգային և գաղափարական մեկնակետից լուսաբանելու մերժելի սկզբունքին՝ հետին պլան մղելով ներքին ու արտաքին քաղաքական իրողությունների պատճառահետևանքային կապը և մարտահրավերները ներազգային կյանքում: Հիմնական շեշտը դրվել է դաշնակցական կառավարության, այսպես կոչված, ապիկար քաղաքականության վրա:

Այդ նույն տեսակետն են կրկնել նաև սփյուռքահայ որոշ հեղինակներ, հատկապես հակադաշնակցական ճամբարից (կոմունիստական, հնչակյան, ռամկավար), ժամանակի գաղափարական տեսահիմքերին հենվելով՝ մայիսյան ապստամբության առաջացման պատճառները միակողմանիորեն վերագրել են Հայաստանի իշխանություններին:

Ցավոք, ճշմարտությունը խեղաթյուրվում է նաև մեր օրերում արդեն հակառակ դիրքերից: Հայաստանի Հանրապետությունում և Սփյուռքում հիշյալ կամ դրան առնչվող թեմաներով լույս են տեսել նոր նյութեր և ուսումնասիրություններ, որոնց հեղինակները, կրկնելով իրենց նախորդներին, փորձ են անում ցույց տալ, որ Հայաստանում առկա սոցիալական և քաղաքական խնդիրները՝ իբրև ազդեցություն, չէին կարող առաջ բերել

[1] Գ. Գալոյան. Մայիսյան հերոսական ապստամբությունը, Երևան, 1960, նույնի՝ հերոսական մայիսից – հաղթական նոյեմբեր, Երևան, 1980: Գ. Ղարիբջանյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ., Երևան, 1955, նույնի՝ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում, Երևան, 1955: Հ. Կարապետյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, Երևան, 1961 և այլն:

զինված պայքարի դրսևորումներ, հայ բոլշևիկները ժողովրդի մեջ հենարան և աջակցություն չունեին, նրանց ելույթներն ավելի շատ զինվորական խռովությունների տեսք էին ստացել, Անդրկովկասում Ռուսաստանի մոտալուտ ներկայության հեռանկարը ոգեշնչել էր հայ բոլշևիկներին և այլն:

Այսպիսով, ուսումնասիրողների մի մասը հայիոյում է բոլշևիկներին, մյուսը՝ դաշնակցականներին կամ երկուսը միասին՝ թուրքերին և դավաճան Արևմուտքին: Ոչ ոք, կարծես, չի ուզում հաշվի նստել այն ժամանակ ստեղծված օբյեկտիվ իրողությունների հետ: Իսկ իրավիճակն այսպիսին էր: Կառավարության վարած ներքին քաղաքականությունը, մաուզերիստների ու խմբապետների հաստատած տեռորը լիակատար կերպով հյուծել էր ժողովրդին: 1919թ. վերջերին Հայաստան այցելած Հովհաննես Լորիս-Մելիքովն իր տպավորությունների մասին ահա թե ինչ է գրել. «Ներկա Հայաստանը, բոլոր առումներով գտնվելով խղճալի վիճակում, նման է անապատի»: Նա հայտնել է նաև, որ դաշնակցությունը «խառնվում է կառավարության բոլոր գործերին և անդամալուծել է ամեն մի մասնավոր նախաձեռնություն», և հավելում է, որ «այս երկու միլիոն բնակիչներով փոքրիկ երկիրը այժմ ունի բազմաթիվ մինիստրություններ, չինովնիկների բանակ, և այս բոլորը պետության հաշվին»[1]: Սովի և տնտեսական ճգնաժամի, բնակչության կյանքի ու գույքի անպաշտպանության հետևանքով քայքայումը սկսվել և արագորեն վարակում էր պետական ողջ համակարգը: Խնդիրների առաջացման պատճառը նաև իշխանությունն էր, և նա էլ պարտավոր էր խելամիտ քայլերով վերացնել դրանք:

Մինչդեռ, ինչպես դիպուկ նկատել է վաստակաշատ Լեոն, «Պետությունը անդադար օր ու գիշեր թալանվում էր: Այն թալանում էին դաշնակցական մինիստրները, թալանում էին և Բաքվից ու այլ տեղերից դժբախտ լեշի վրա հավաքված գիշատիչները՝ զանազան տեսակի սպեկուլյանտներ և սրիկաներ՝ զանազան արդյունավետ հանձնարարություններ, կոմիսիոներություններ, մենաշնորհներ ստանալով մինիստրներից: Հայ ինտելիգենցիան բոլորովին չէր ուզում անբաժին մնալ այդ թալանի մեջ»[2]: Եվ ուրեմն մայիսյան ապստամբության մեջ նշանակալից էր նաև ժողովրդի դժգոհությունը գործող քաղաքական ռեժիմից, և պայքար էր գնում այդ ռեժիմը վերադնելու ու սոցիալական վերափոխումների համար:

Հատկանշական է, որ համակարգային փոփոխությունների անհրաժեշտությունը գիտակցում էին նաև իշխանության ներսում գտնվողներն ու նրան մոտ կանգնածները: Հայաստանի քաղաքական շրջանները, զգալով պահի ու անցքերի լրջությունը, արտակարգ լիազորություններ տալով Ալ

---

[1] Տե՛ս Ռուսական հեղափոխությունը և Անդրկովկասյան նոր հանրապետությունները, էջ 26:

[2] Լեո. Անցյալից, Երևան, 2009, էջ 403:

Խատիսյանի կառավարությանը, հնարավորություն էին ստեղծել նրա համար արագ, կտրուկ ու հաստատուն քաղաքականություն վարելու, երկիրը տարտամ ու անորոշ վիճակից դուրս բերելու հիմնական քաղաքական ուղու վրա: «Սակայն նոր կաբինետը,— նշում է «Աշխատավորը»,— իր առաջին նախարարի բերանով, դժբախտաբար, չհայտարարեց անհրաժեշտ դեկլարացիան իր ապագա աշխատանքների վերաբերմամբ և չընդգծեց այն ուղին, որով պիտի տաներ երկիրը դեպի ազատության և անկախության հաղթանակը»[1]:

Սոցիալ-դեմոկրատ (մենշևիկ) Ա. Խոնդկարյանը, անդրադառնալով Ալ. Խատիսյանի կառավարության հրաժարականին և նոր բյուրո-կառավարության ստեղծմանը, անկեղծացել է. «Կառավարությունը, անշուշտ, ունեցել է սխալներ, բայց այդ պիտի վերագրել ոչ այնքան կառավարության մեջ եղած անձերին, որքան տիրող սիստեմին»[2], ասել է թե՝ պետության կառուցվածքին և կառավարման համակարգին:

Փաստորեն, գործող վարչակարգը չէր ուզում հաշվի նստել օբյեկտիվ իրավիճակի հետ և չէր ցանկանում ձեռքից բաց թողնել իշխանությունը: «…հայ ժողովուրդը,— գրում է Լեոն,— այդ պատճառով պիտի նորանոր արյունոտ փոթորիկների մեջ խեղդվեր»[3]՝ այդ պարագայում անգամ չմտածելով պետականությունը կորցնելու մասին:

Հայտնի է, որ գոյություն ունեցող տնտեսական խնդիրների համար լուծումներ փնտրելու՝ կառավարության մեթոդոլոգիան հանգեց կենսականորեն անհրաժեշտ մի շարք մթերքների ու ապրանքների ձեռքբերման նպատակով բնակչությունից բռնագրավումներ կիրառելու մերժելի սկզբունքին, իսկ բամբակի, ցորենի, խաղողի, խմիչքների և այլ մթերքների վաճառքը հայտարարվեց պետական մենաշնորհ (մոնոպոլիա), որը հանգեցրեց տագնապահարույց հետևանքների:

Անդրադառնանք կոնկրետ փաստերի վերլուծությանը, որպեսզի ընթերցողը, ինչպիսի քաղաքական նախապատվություններ ու համոզմունքներ էլ ունենա, համոզվի, թե որքան հիմնավոր ու հավաստի են դրանք: Նախ նշենք, որ Հայաստանի աշխատավորների, մասնավորաբար գյուղացիության ելույթները գործող իշխանությունների դեմ զանգվածաբար սկսվեցին և մեծ չափերի հասան հատկապես 1918 թ. երկրորդ կեսերին, երբ հարկահանության բնագավառում և հացահատիկի գանձումների ընթացքում չարաշահումներն ու այլ կարգի անօրինականություններն աներևակայելի չափերի հասան: Փաստաթղթերից մեկում նշվում է, որ 1918 թ. օգոստոսին Նոր Բայազետի

---

[1] «Աշխատավոր» (Թիֆլիս), 8. V. 1920թ.:

[2] Տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1998, էջ 520:

[3] Լեո, նշվ. աշխ., էջ 410:

գավառային կոմիսարը հանրապետության ներքին գործերի նախարարին հաղորդում է. «... շրջանային կոմիսարները գնում են գյուղերը արագացնելու հարկերի և հացի գանձումը, բայց այնտեղ նրանք հանդիպում են գյուղացիների զինված դիմադրությանը՝ ընդհուպ մինչև ռումբի գործածություն ... Բնակչությունը չի ճանաչում իշխանությունը»[1]:

1918 թ. հոկտեմբերին գյուղացիների զինված ելույթներ են տեղի ունենում գավառի Շահրիզ, Նորատուս, Դալիղարդաշ, Ղշլաղ, Չիբուխլու, Օրդաքլու և այլ գյուղերում: Նոր Բայազետի գավառական կոմիսարը տագնապով հայտնում է ղեկավարությանը, որ գավառի բնակիչները չեն ճանաչում ազգային խորհրդի իշխանությունը, զորքի համար մթերքներ չեն տալիս, զինաթափել են մթերք հավաքող զինվորներին: Գյուղացիների դիմադրությունը ճնշելու համար հարկավոր են թնդանոթներ[2]: Ինչպես երևում է Երևանի գավառային կոմիսարի՝ Շահրիզի գյուղացիների ապստամբության մասին մի հաղորդագրությունից, արձագանքը չի ուշանում. «1918թ. հոկտեմբերի 2-ին Շահրիզ գյուղն ապստամբեց և զինված դիմադրություն ցույց տվեց: Առաջին հայկական հետևակային գնդի հեծյալ-հետախուզական ջոկատի կողմից ապստամբությունը ճնշված է: Կցվում է ապստամբության 24 ղեկավարների ցուցակը»[3]:

Այս ամենի պատճառը նաև հանրապետության ղեկավարների անձնական ու խմբային շահերն էին, որով իշխանությունն ինքն իրեն դատապարտեց ժողովրդի մեծամասնության կողմից մերժված լինելու վիճակին: Բերենք այս միտքը հաստատող մի քանի օրինակ: 1918 թ. սեպտեմբերի 26-ի համարում «Դրությունը Նոր Բայազետի գավառում» խորագրի ներքո իր դիտարկումներն ու մտորումներն է ընթերցողին հայտնում «Ժողովուրդ» թերթը. «Երևակայեք այժմյան դրությունը, երբ բերքը միջակ է. ազգաբնակչության 60 %-ը հազիվ ցանած լինի, բազմահազար գաղթականությունը ծանրաբեռնված է գյուղացու շլնքին, իսկ ռեկվիզիցիայի (բռնագրավումներ) համար նշանակված անթիվ լիազորներ՝ շատերը առանց դոկումենտների, վխտում են գավառում: Ռեկվիզիցիայի է ենթարկվում ամեն տեսակ հացահատիկ, առանց քննության թե քանի շունչ ունի հացի տերը: Ճանապարհի վրա գրավում են նաև այն ցանք չունեցող մարդու մի քանի փութ հացը, որ 15—20 օրում հազիվ է կարողացել ճարել թափառելով գյուղից գյուղ»[4]: Պարբերականը եզրակացնում է, որ ժողովրդի դրությունը կթեթևանա,

---

[1] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 67, ց. 1, գ. 608, թ. 19:

[2] Տե՛ս Գ. Ղարիբջանյան, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները..., էջ 258-261:

[3] Նույն տեղում, էջ 259:

[4] «Ժողովուրդ» (Երևան), 26. IX.1918:

եթե վերացվեն հացի մոնոպոլիան, տակսան (սակագինը) և ռեկվիզիցիայի համար նշանակված լիազորները: Այդ ժամանակ հաց ունեցողը չի թաքցնի, իսկ չունեցողն առանց դժվարության կառնի[1]: Սա գերակա խնդիր էր, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ երկիրն այդ ծանր վիճակից, այդ ճահճից դուրս բերելու ու նրա հետագա զարգացումն ապահովելու նախապայմանը և, մեծ հաշվով, երկիրը կործանումից փրկելու հրամայականներից մեկը:

Բռնագրավումների էությունը լիովին հասկանալու համար թերևս հարկ կա իմանալ, թե իրականում ինչպես էին տեղի ունենում դրանք: Ժամանակի ընդդիմադիր մամուլը հագեցած էր ծավալված բռնագրավումների և դրանց շուրք ստեղծված մթնոլորտի հրապարակումներով: Վկայակոչենք այդօրինակ մի քանի փաստ: Այսպես, 1918 թ. դեկտեմբերին Օրդաքլու գյուղից մի խումբ գյուղացիներ իրենց դժդոհությունը նամակի տեսքով հայտնում են «Ժողովուրդ» թերթին: «Նոյեմբերի 20-ին գյուղ է գալիս լիազոր Վարդան Ղարագյոզյանը ու խմբապետ Մեսրոպն իր խմբով, հավաքում են ամբողջ գյուղացիներին, և լիազորը սկսում է սպառնալիքների հոսք (թնդանոթի, հրացանի)՝ պահանջելով մեր գյուղին բաժին ընկած հացը: Իսկ խմբապետի օգնական վերինախտեցի Ղմոն սկսում է անլուր հայհոյանքներ առանց պատրվակի»[2],— գրված է նամակում: Թերթի տեղեկացմամբ՝ լիազոր Վարդանին հաջողվում է տներից դուրս բերել գարի, ալյուր, կարտոֆիլ և քիչ քանակությամբ ցորեն: Հաջորդ օրը հավաքված ու արդեն կշռված հացահատիկը լիազորի և Ղմոյի միջոցով փոխադրվում է Ելենովկա[3]: Գյուղացիներին, սակայն, սպասվում էր նոր անակնկալ: Հաջորդ օրը նրանց կանչում են Ելենովկա, և Վարդանը հրամայում է նորից կշռել ողջ պարենը: Ընդհանուրից պակասում է 18 փութ, ուրեմն՝ գյուղում տված 30 խալվար (500 կգ կամ 30 փութ) հացից պակասում է 99 փութ հացահատիկ: Բարեբախտաբար, հաջողվում է պարզել, որ այդ 99 փութը գողացված է լիազորի և Ղմոյի կողմից[4]:

«Հացահատիկի ստիպողական գրավման համար,— կարդում ենք «Նամակ Եղվարդից» խորագրով հոդվածում,— մեր գյուղ են եկել լիազոր Կարապետ Այվազյանի տրամադրության տակ մի զորախումբ պուլիմոտներով, որոնք և ղեկավարում են գյուղացիների տների խուզարկելը: Խուզարկությունները կատարում էին առանց գյուղական ներկայացուցչի մասնակցության, գրավածի համար ստացականներ չէին տալիս, գրավում են ինչ իրենց դուր է գալիս՝ յուղ, թխած հաց, գրավում են աչքը տեսած ցորենի

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] «Ժողովուրդ», 18. XII. 1918:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում:

ամբողջ պաշարը»: Նամակն ավարտվում է արդեն սովորական դարձած մի դեպքի նկարագրությամբ. «Երեկ Արամ Մուրադխանյանի տանից տարան ունեցած բոլոր ցորենը: Մուրադխանյանի ընտանիքը բաղկացած է 18 հոգուց, սովամահ չլինելու պատճառով երկուսը դանակով ինքնասպանության փորձ են անում, բայց շուտով հասնում և թույլ չեն տալիս»[1]:

Նույն թերթի՝ «Ռեկվիզիցիան Չիբուխլուում» վերնագրով հրապարակումից էլ տեղեկանում ենք. «Ամսի 7-ին Չիբուխլու գյուղում մինչև առավոտյան ժամը մեռել են խոլերայից 7 հոգի, գյուղում գրեթե տուն չկա, որ հիվանդ չունենա կամ խոլերայով կամ տիֆով: Գյուղի այդ դրությունը իրեն բավական չէ, վաղ առավոտից սկսել են դեզերտերներ (դասալիքներ — Հ.Հ.) ժողովել: Եվ ահա խումբ-խումբ թափվում են բակերը, տները, կոշիկները հանում են մարդկանց ոտերից և այլն: 12 ձի հավաքեցին, ժողովրդից այդ օրը եզ ու արաբա են պահանջում:Եվ որովհետև եզները պահանջված ժամանակին չեն ներկայացնում, ուստի սկսվում է եզների բռնի բերումը, գյուղում, հանդում, որտեղ եզ են տեսնում, քաշում են բերում, լծում: Սա մի օր չէ, երկու օր չէ, այդպես է ամբող 9 ամիսների ընթացքում...

Բայց մեծ ցավը այն է, որ ժողովրդի ձեռքից ձիեր են առնում ցանքի, կալ ու կութի ժամանակ»[2]:

Հայաստանի վարչապետին ուղղված իրենց բողոքում Շահրիզ, Ծաղկունք և Դդմաշեն գյուղերի բնակիչները 1919 թ. սեպտեմբերի 13-ին գրում են. «Ուր փախչի գյուղացին: Միլիցիային յուղի տեղ պանիր տվիր՝ բանդ վերջացավ, կամ արաբադ պետք է գնա պադվոդ, եթե այդ չանես, վրայիդ շալվարը կազյոննի է... Միլիցիոներներն արագ կերպով թալանում են գյուղերը, գյուղերը շրջում ամբողջ կամանդով և նրանց համար պետք է պատրաստ լինի ձրի կերպով ամեն ինչ խեղճ գյուղացուց... ով որ ուզում է լինի, նրանք բռնում են ու թալանում»:[3]

Բերենք մեկ այլ խոսուն օրինակ: 1918 թ. Դարաչիչագի տեղամասի Ռնդամալ գյուղի կոմիսար Սարգիս Երամովը պառլամենտի սոցիալ-դեմոկրատական խմբավորմանը հասցեագրված դիմում-բողոքում, վրդովվելով խմբապետ Մեսրոպի և նրա 300 զինվորների ապօրինի գործողություններից, գրում է. «Ինչ էին անում այդ ենիչերները այստեղ, նկարագրել հնարավոր չէ, վերցնում էին հացը, ալյուրը, գարին, խոտը, պահանջում էին ոչխար, հավ, բռնություններ էին գործադրում», և հավելում, որ «Հասարակությունը վճռել է

[1] «Ժողովուրդ», 26.IX.1918:

[2] «Ժողովուրդ», 28.IX.1918:

[3] Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում, Երևան, 1932:

ընդունել մահմեդականություն և դառնալ Թուրքիայի հպատակներ, գոնե իրենց դրությունը փրկելու համար...»[1]:

Բազմաթիվ տեղեկություններ կան գավառի բնակավայրերում ռուս բնակչությանը կողոպտելու մասին, որ իրականացրել են իշխանությունները զորքի օգնությամբ: Օրինակ՝ 1920 թ. հունվարի 22-ին կառավարության որոշումով իրավունք տրվեց ռազմական գլխավոր և բրիգադների մատակարարներին սայլեր պահանջել մոլոկան գյուղերից միաժամանակ ոչ ավելի, քան գյուղի բոլոր սայլերի քսան տոկոսը՝ վարձակալման վճար տալով շուկայի գների հիսուն տոկոսի չափով[2]:

Սակայն երկրում առկա անօրինականության, անպատժելիության և համատարած անարդարության մթնոլորտը չի փոխվել բնակչության կողմից մշտապես կառավարությանն արված ահա նման բազմաթիվ ահազանգերից հետո անգամ, եթե չասենք, որ հասել է պետական մակարդակի: Այն, որ իշխանության դիրքորոշումն այդ հարցում մնացել էր նույնը, վկայում է հետևյալ փաստը. «... վերջերս քրդերը քշել տարել են քաղաքի (Նոր Բայազետ — Հ. Հ.) ամբողջ նախիրը: ... Իսկույն դեպքի տեղ է հասնում մի զորամաս, որի ջանքերով հաջողվում է ազատել ամբողջ նախիրը և վերադարձնել, սակայն մինչև օրս էլ ոչ ոքի չի տրվում իր տավարը՝ համարելով կառավարության սեփականություն»[3]:

Պատմաբաններ Ա. Հակոբյանը և Ա. Սարգսյանը ճիշտ են բնորոշել, որ «բռնագրավումների ու մենաշնորհի այս քաղաքականությունը ինչ-որ տեղ հիշեցնում էր բոլշևիկների «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, քաղաքականություն, որը խոչընդոտում էր մարդկանց անձնական շահագրգռվածությունը և, ընդհանրապես, տնտեսության զարգացումը»[4], միաժամանակ սոցիալական կեղեքման էր ենթարկում նրանց:

Հայաստանում հասունացող քաղաքական ճգնաժամի գործում, անշուշտ, որոշակի դեր խաղաց նաև արևմտահայ բազմահազար փախստականների առկայությունը. «Գաղթականության հարցը մեկն է այն գլխավոր պատճառներից, որոնք ստեղծում են մեր մենակ պետության համար «կատաստրոֆիկ դրություն»: Մի երկիր, որ անկարող է կերակրել նույնիսկ իր բնիկ ազգաբնակչությանը, ընդունել է իր մեջ մոտ կես միլիոն ընչազուրկ,

---

[1] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 17, թ. 6, նաև՝ ֆ. 404, ց. 1, գ. 17, թթ. 9-10:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 154, թ. 133:

[3] «Մշակ» (Թիֆլիս), 3. X. 1918:

[4] Ա. Սարգսյան, Ա. Հակոբյան, Հայոց պատմություն (հնագույն շրջանից մինչ մեր օրերը), Երևան, 2004, էջ 237:

թշվառ ժողովուրդ, որ շարունակ թափառում է Ելենովկայից Էջմիածին և Ղազախից մինչև Նոր Բայազետ՝ փնտրելով «Հաց» և բնակարան»[1]:

Վերոշարադրյալից այն տպավորությունը չստեղծվի, թե կառավարությունը սոցիալ-քաղաքական լարվածությունը թուլացնելու խնդիր չի ունեցել ու ջուրն է մտել ոչ թե ափին հասնելու, այլ միայն թրջվելու և սեփական ժողովրդին գթաշարժելու համար: Անշուշտ, կառավարության կողմից որոշակի քայլեր արվել են այդ ուղղությամբ, ասենք, բռնագրավումները ինչ-որ ձևով մեղմելու, որոշ կենտրոններում հիվանդանոցներ հիմնելու և, ընդհանրապես, բժշկասանիտարական վիճակը բարելավելու, հին պարտքերի պատճառով բնակչության ալյուր ստանալու արգելքը վերացնելու, գարնանացանի համար սերմացուով օգնելու, գյուղական մարմինների ընտրությունները կանոնավորելու համար և այլն, սակայն դրանք բավարար չէին տիրող սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակի հաղթահարման ու ներքաղաքական մթնոլորտի առողջացման առումով, իսկ հակառակորդ քաղաքական ուժը՝ բոլշևիկները, ունենալով սոցիալական հենարան, շարունակում էր ոտքի վրա մնալ: Վերջինիս գաղափարաքաղաքական ներգործության հետևանքով հայ հասարակության մի զգալի հատվածը հույսը կտրել էր, որ գործող իշխանությունը կդրսևորի կամք և ունակություն՝ առկա խնդիրները լուծելու:

Օգտվելով կառավարության հանդուրժող քաղաքականությունից՝ կոմունիստները կամաց-կամաց կենդանության նշաններ ցույց տվեցին ու սկսեցին իրենց աշխատանքները բանվորության և բնակչության ընչազուրկ տարրերի մեջ, գրում է «Աշխատավոր» թերթը և ավելացնում. «Ընտելացած ամենավատ խուժանավարության՝ այդ տնաբույս «կոմունիստները» աշխատում էին գրգռել ժողովրդի մութ ինստինկտները և նրան ոտքի հանել կառավարության դեմ»[2]: Որպես օրինակ՝ բերենք Թիֆլիսում հրատարակվող սոցիալ-դեմոկրատ մենշևիկների պաշտոնաթերթ «Պահակի» մի հրապարակումը. «Ժամանակն է, որ Հայաստանի բանվորները հսկայի մի հերոսական թափով թափ տան իրենց ուսերից նոր բռնապետության անարդար լուծը»[3]:

Գործող իշխանությունների սխալներն ու բացթողումները, որ սկիզբ էին առել դեռ հանրապետության առաջին ամիսներից և մեծ արագությամբ բազմապատկվել էին, Հայաստանում հասունացրին վարչակարգից դժգոհ ժողովրդական զանգվածների մի զգալի մասի պոռթկումը: Ուրեմն ստեղծված պայթյունավտանգ իրադրությունը նաև հանրապետության իշխանությունների

---

[1] «Ժողովուրդ», 29.VIII. 1918:

[2] «Աշխատավոր», 13. V. 1920:

[3] «Պահակ» (Թիֆլիս), 14. I.1920:

անհեռատես քաղաքականության հետևանք էր: 1920թ. մայիսին Հայաստանի մի շարք շրջաններում տեղի ունեցան բողոքի բազմաթիվ ելույթներ, որոնք ուղղված էին կառավարության ներքին քաղաքականության, զանազան խմբապետների ու մաուզերիստների սանձարձակ գործողությունների դեմ: Հայաստանի մի շարք շրջաններում մայիսմեկյան ցույցերը շուտով վերածվեցին զինված ապստամբության: Այդ ապստամբությանն անդրադառնալը չի մտնում սույն հոդվածի նպատակների մեջ: Միջանկյալ նշենք, որ հիմնական ընդվզող զանգվածը զինվորականությունն էր: Երկրում հաստատվեց ռազմական դրություն: Մայիսի 5-ին խորհրդարանի արտակարգ նիստում Ալ. Խատիսյանի կառավարությունը հրաժարական տվեց, և Դաշնակցության բյուրոյի անդամներից կազմվեց նոր կառավարություն՝ Հ. Օհանջանյանի գլխավորությամբ: Խորհրդարանը ընդունեց հետևյալ օրենքները. առաջին՝ դադարեցնել խորհրդարանի զբաղմունքները մեկ ամսով, երկրորդ՝ խորհրդարանի բոլոր լիազորությունները տալ կառավարությանը և երրորդ՝ խորհրդարանի նախագահությանը ու կառավարությանը արտակարգ հանգամանքների դեպքում հրավիրել խորհրդարանի նիստ[1]: Փաստորեն գործադիր և օրենսդիր իշխանությունները կենտրոնացվեցին կառավարության ձեռքում: Հանրապետության տարածքը բաժանվեց 4 նահանգների, որոնց համար գործադիր ղեկավարներ նշանակվեցին գեներալ-կոմիսարներ: Արտակարգ լիազորներ ուղարկվեցին խռովարար գավառներ՝ տեղերում կարգը վերականգնելու համար:

Ապստամբության կենտրոնական օջախն Ալեքսանդրապոլն էր, որտեղ էլ մայիսի 7-ին բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցության ընթացքում ստեղծվեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե: Ապստամբությունն սկսվեց մայիսի 10-ին: Նույն օրը ռազմահեղկոմը Հայաստանի տարբեր շրջաններ ուղարկած հեռագրով հայտարարեց Հայաստանի խորհրդայնացումը: Ալեքսանդրապոլի օրինակին հետևեցին Իջևանը, Կարսը, Սարիղամիշը, Դիլիջանը, Գորիսը:

Անհանգիստ էր դրությունը նաև Նոր Բայազետի շրջանում: Այն բանից հետո, երբ մայիսյան խաղաղ ցույցերի արդյունքում ժողովրդական զանգվածների ակտիվության վերածումն ապստամբության դարձավ լիակատար, մայիսի 8-ին Արմենկոմի հանձնարարությամբ Նոր Բայազետ եկավ հայտնի բոլշևիկ Հովհաննես Սարուխանյանը[2]՝ապստամբությունը

---

[1] «Աշխատավոր», 7. V.1920:

[2] Հ. Սարուխանյանը ծնվել է 1882 թ. Նոր Բայազետում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղում և ապա շարունակել Երևանում: 1904 թ. մտնում է ՌՍԴԲԿ-ի շարքերը: Նրա անվան հետ է կապված Նոր Բայազետում 1904 թ. հիմնված մարքսիստական առաջին խմբակի պատմությունը: 1907 թ. Հ. Սարուխանյանն էքստեռն կարգով ավարտում է Թիֆլիսի

կազմակերպելու և գլխավորելու համար[1] (Նոր Բայազետի դեպքերից առաջ՝ 1920 թ. ապրիլին, այդ շրջանի գեներալ-նահանգապետ Մ. Սիլիկյանը՝ տեղեկանալով, որ Հ. Սարուխանյանը հակապետական քարոզչություն է մղում զորքի մեջ, արտաքսում է նրան Նոր Բայազետից)[2]: Այս մասին Արմենկոմը հետագայում տեղեկացրել է նաև Անդրկովկասի երկրային կոմիտեին: Այդ կապակցությամբ Արմենկոմի՝ Երևանից Թիֆլիս երկրկոմին ուղարկած հեռագրում մասնավորապես ասվում էր. «Համապատասխան հրահանգով մենք Նոր Բայազետի շրջանն ուղարկեցինք, այժմ հանգուցյալ, ընկ. Սարուխանյանին, որն իրականացրեց Արմենկոմի առաջադրությունը և սկսեց գործողությունները»[3]:

Սարուխանյանի վերադարձը, անշուշտ, ցանկալի չէր իշխանությունների համար, և նրանք ամեն ինչ արեցին՝ խանգարելու նրա մուտքը Նոր Բայազետ: Նախ՝ այդպիսի անհաջող փորձ կատարեց գավառային կոմիսարը՝ սպառնալով Սարուխանյանին, որ վերջինս Ելենովկայից չուղևորվի Նոր Բայազետ: Կոմիսարը ճարահատյալ Ելենովկայից հեռագրով հայտնում է Ղարանլուղում գտնվող գեներալ-նահանգապետ Մ. Սիլիկյանին (նա նաև տեղի զորքերի շտաբի պետն էր) Հ. Սարուխանյանի՝ Նոր Բայազետ վերադառնալու մասին և խնդրում է դիմել անհրաժեշտ միջոցառումներ[4]: Գեներալի հորդորներն ու սպառնալիքները ևս ապարդյուն են անցնում:

Հ. Սարուխանյանի՝ Նոր Բայազետ վերադառնալու մասին գրել են նաև ժամանակի հեղինակավոր մի շարք թերթեր՝ հրապարակելով բոլորովին այլ տեղեկություններ: Արտաքսումից «մի քանի ժամանակ հետո Սարուխանյանը

Ալեքսանդրյան ինստիտուտը: Քաղաքական հայացքների պատճառով 1910 թ. նա ձերբակալվում և գավառից արտաքսվում է Իգդիր, որտեղից 1911 թ. տեղափոխվում է Կաղզվան, իսկ 1915 թ. ՝ Կարս ու գլխավորում տեղի բոլշևիկյան կազմակերպությունը:

1918 թ. գարնանը ՌՍԴԲԿ կովկասյան երկրային կոմիտեի առաջադրանքով Հ. Սարուխանյանը տեղափոխվում է Թիֆլիս: 1919 թ. ձերբակալվում և մի քանի ամիս Մետեխի բանտում պահվելուց հետո արտաքսվում է Վրաստանից: Գալով Հայաստան՝ նա մի քանի ամիս նորից ուսուցչություն է անում Կարսում և ապա տեղափոխվում Նոր Բայազետ (տե ս Գ. Գալոյան. Հերոսական մայիսից—հաղթական նոյեմբեր, էջ 104—105):

[1]Տե՛ս Գ. Ղարիբջանյան Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները…, էջ 305, Գ. Գալոյան, Հերոսական մայիսից հաղթական նոյեմբեր, էջ 85:

[2] Տե՛ս «Աշխատավոր», 25. VI.1920:

[3] ՀԱԱ-2 ֆ. 36, ց. 1, գ. 7, մաս առաջին, թթ. 107-113:

[4] Տե՛ս Հ. Կարապետյան, նշվ. Աշխ., էջ 189, Գ. Գալոյան, Հերոսական մայիսից հաղթական նոյեմբեր, էջ 83, նույնի՝ մայիսյան հերոսական ապստամբությունը, էջ 84:

ինքնագլուխ կերպով վերադառնում է Նոր Բայազետ, դիմում Սիլիկյանին և բացատրելով իր ընտանիքի ծանր դրությունը՝ խնդրում է թույլ տալ իրեն մնալ Նոր Բայազետում», — գրել է «Աշխատավոր» թերթը՝ նշելով, որ Սարուխանյանը զղջացել է՝ ասելով, որ «ինքը շատ լավ գիտակցում է, թե որպիսի մեծ ոճիր է այս պայմաններում փորձել կազմալուծել հայկական բանակը, ուստի ինքը ազնիվ խոսք է տալիս, որ բանակի մեջ պրոպագանդա չի մղել և չի մղի այսուհետև»[1]: Այս առնչությամբ մոտավորապես նույնն են գրել նաև իշխանության վերահսկողության տակ գտնվող թերթերը:

Ինչ վերաբերում է հարցի՝ բոլշևիկյան լրատվամիջոցների լուսաբանմանը, ապա ըստ արխիվային փաստաթղթերի՝ արհամարհելով գեներալի սպառնալիքները և առատաձեռն խոստումները՝ Հ. Սարուխանյանը նրան ասել է. «Կոմունիստները երբեք չեն նահանջում իրենց գաղափարներից և ոչ մի դեպքում չեն կատարում թշնամու թելադրանքները»[2]: Այսքանով էլ ավարտվում է նրանց երկխոսությունը:

Տրամագծորեն տարբեր տեղեկություններից երեք բան հստակ է ա) Հ. Սարուխանյանը վերադարձել է Նոր Բայազետ, բ) իշխանությունը ողջ թափով ցանկացել է իր և իր վերահսկողության տակ գտնվող մամուլի հնարավոր ձևերով նվաստացնել քաղաքական հակառակորդին, գ) Հ. Սարուխանյանը խիստ կոշտ և կտրուկ է եղել իշխանության ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ:

Գալով Նոր Բայազետ՝ Հ. Սարուխանյանն իր կուսակից ընկերոջ՝ Բ. Բատիկյանի[3] հետ լծվել է ապստամբության նախապատրաստման գործին: Մայիսի 10-ին Հ. Սարուխանյանն ուղևորվեց Ղարանլուղ, որտեղ հրավիրվեց կուսակցական ակտիվի խորհրդակցություն. առանձնակի կարևորություն տրվեց զինվորների շրջանում տարվող նախապատրաստական աշխատանքներին: Ղարանլուղում էլ Հ. Սարուխանյանը հանդիպում ունեցավ գեներալ Մ. Սիլիկյանի հետ:

Նոր Բայազետի գավառում ապստամբությունը սկիզբ առավ Բասարգեչարի կայազորի զինվորների հակակառավարական ելույթով: Զինվորների ընդվզումը, որը սկսվեց մայիսի 11-ին, անակնկալ էր, և սպայական կազմն այն կանխել չկարողացավ: Այդ օրը մոտ 300 զինվորներ Ս. Բոստանջյանի, Բ. Մինասյանի, Ա. Մելոյանի և այլոց գլխավորությամբ

---

[1] «Աշխատավոր», 25. VI.1920:

[2] ՀԱԱ-2, ֆ. 36, ց. 1, գ. 7, մաս I, թթ. 107-113:

[3] Բ. Բատիկյանը ծնվել է 1892 թ. Նոր Բայազետում՝ հայտնի մտավորական և հանրային գործիչ Ստեփան Բատիկյանի ընտանիքում:: Կրթությունը ստացել է տեղի դպրոցում և ապա գավառի գյուղերում զբաղվել է ուսուցչությամբ (տե՛ս ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 185, թ. 130, Գ. Գալոյան, Հերոսական մայիսից հաղթական նոյեմբեր, էջ 109-110):

շարժվեցին դեպի Ղարանլուղ: Մայիսի 12-ին նրանք մտան Ղարանլուղ և միացան տեղի կայազորի զինվորներին[1]: Բանակի հրամանատարության ջանքերը՝ համոզել զինվորներին և նրանց զորանոցներ վերադարձնել, արդյունք չտվեցին: Ավելին՝ նրանք ձերբակալեցին սպաներից մի քանիսին, այդ թվում և գեներալ Մ. Սիլիկյանին: Նրա ձերբակալումը կատարվել է Հ. Սարուխանյանի անմիջական մասնակցությամբ: «...զինվորների գլուխ անցած, Սարուխանյանը անձամբ գալիս է ձերբակալելու Սիլիկյանին»,— գրել է «Աշխատավորը»՝ նշելով, որ Մ. Սիլիկյանի հարցին «Չէ՞ որ դուք ինձ ազնիվ խոսք տվեցիք բանակին ձեռք չտալ պ. Սարուխանյան», վերջինս պատասխանել է. «Ես այն ժամանակ ձեզ ստեցի, ընկեր Սիլիկյան»[2]:

Ապստամբությունը մեկ կենտրոնից ղեկավարելու և գավառի իշխանությունը վերցնելու համար Սարուխանյանի գլխավորությամբ ստեղծվեց ռազմահեղափոխական կոմիտե: Հեղկոմի կազմում ընտրվեցին Ս. Մակարյանը, Մ. Պետրոսյանը, Հ. Խաչատրյանը, Բ. Մինասյանը, Լ. Ներսիսյանը և Ս. Բոստանջյանը: Բացի դրանից՝ կազմվեց շրջանային հեղկոմ հետևյալ կազմով՝ Ա. Նալբանդյան (նախագահ), Վ. Սիրունյան, Ս. Վարդանյան, Լ. Խանփերյան և Ա. Լազարյան[3]:

Սկսվում է ապստամբության բուն նախապատրաստությունը տեղերում: Երբ արդեն ապստամբությունը տեղի էր ունեցել, և գավառն ապստամբական իրադարձությունների հորձանուտում էր, մի շարք գյուղերում ապստամբներին հաջողվեց վերցնել իշխանությունը, ինչպես՝ Ալիղոխում, Գյոլում, Գյոզալդարայում, Դալիղարդաշում, Երանոսում, Քյուղաջղում և այլուր: Կազմակերպական նույնպիսի աշխատանք էր տարվում նաև մյուս գյուղերում:

Ապստամբության ծավալման օրերին՝ ի մասնավորի մայիսի 15-ին, զինվորների և գյուղացիների հանրահավաքում արտասանած ճառում բորբոքելով նրանց մտքերն ու զգացմունքները՝ Հ. Սարուխանյանը կոչ է անում վճռական գրոհի անցնել հակահեղափոխության դեմ, վերցնել Նոր Բայազետը և Ելենովկայի վրայով միանալ Դիլիջանի գավառի ապստամբ աշխատավորներին, որպեսզի միացյալ ուժերով շարունակեն պայքարը հանուն խորհրդային իշխանության[4]:

Իշխանության գավառային մարմինների ու կառավարության արտակարգ լիազորներ Գ. Շահինյանի, Գ. Քալաշյանի և քաղաքագլուխ Վ.

---

[1] Տե՛ս «Հառաջ» (Թիֆլիս), 23. V. 1920:

[2] «Աշխատավոր», 25.VI. 1920:

[3]Տե՛ս ՀԱԱ-2, ֆ. 36, ց. 1, գ. 7, թ. 56, Գ. Գալոյան, Հերոսական մայիսից հաղթական նոյեմբեր, էջ 83-84, Գ. Ղարիբջանյան մայիսյան ապստամբությունը Հայաստանում էջ 58, Հ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 193:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ, 147, թթ. 7-8

Աֆրիկյանի զգուշացումներն ու հորդորները արկածախնդրությանը վերջ տալու, որևէ նշանակություն չունեցան. ապստամբությունը շարունակում էր թափ առնել: Հայտարարվեց հակահեղափոխության կողմնակիցների մոբիլիզացիա, ձեռնարկվեցին այլ միջոցառումներ՝ ապստամբներին դիմադրություն ցույց տալու համար: Հայ քաղաքական կուսակցություններից էսէռները և հնչակյանները միացան ապստամբական շարժմանն ու աջակցեցին ապստամբներին[1]: Մնացածները Հայաստանի անկախության և միացյալ Հայաստանի շահի գիտակցումով նախընտրեցին լքել ընդդիմադիր դաշտը, տեղ զբաղեցնել իշխանական ճամբարում և սատարել նրան:

Նրանք ապստամբության առաջին իսկ օրից հանդես եկան եղբայրական քաղաքացիական պատերազմը դատապարտող և գործող իշխանությանը պաշտպանող հայտարարություններով: Հատկապես հիշատակության է արժանի Հայ ժողովրդական կուսակցության դերակատարությունը: Երբ Հայ ժողովրդական կուսակցության Նոր Բայազետի կոմիտեն իր կենտրոնական կոմիտեից հեռագիր է ստանում՝ ամեն կերպ աջակցել տեղական իշխանությանը՝ խռովարարների դեմ կարգը վերականգնելու համար, կոմիտեի նախագահ Տիգրան Տեր-Մանվելյանն անմիջապես դիմում է գավառական կոմիսար Մովսիսյանին և, հայտնելով ստացած հեռագրի մասին, հարցնում է, թե ինչ աջակցության կարիք ունի: Կոմիսարը հայտնում է, որ իր ձեռքի տակ եղած ուժերի մի մասը փախել է, մնացածը շատ քիչ է, իսկ ապստամբ զինվորները մոտենում են քաղաքին: Տեր-Մանվելյանը մի քանի ժամից 40 զինյալներ է դնում նրա տրամադրության տակ: Կոմիսարը, ունենալով ևս 18 հոգի, միացյալ խմբով շարունակում է դիմադրություն ցույց տալ[2]:

Այնուհանդերձ, իշխանական ուժերը մեծապես զիջում էին հեղափոխականներին: Այս կապակցությամբ հետաքրքիր է կառավարության արտակարգ լիազորների դրությունը նախարարների խորհրդին. «ոչ միայն Ղարանլուղ արշավելու, այլ անգամ քաղաքը տեղական ուժերով պաշտպանելու հնարավորություն չկար»[3]: Հուսահատված ու բարոյալքված՝ քաղաքից հեռացան կառավարության գործուղած լիազորները, որոնք գնալուց առաջ յուրայիններին պատվիրեցին. «Ձեր տրամադրության տակ եղած ուժերով դիմադրել մինչև վերջին հնարավորությունը, իսկ եթե մեզ չհաջողվի

---

[1]Տե՛ս ՀԱԱ ֆ. 404, ց. 1, գ. 41, թ. 1, Ա. Հովհաննիսյան, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, Երևան, 1920, էջ 15:

[2] Տե՛ս «Ժողովուրդ», 3.6.1920, 12.6.1920:

[3] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 147, թթ. 7-8:

մինչև այդ հասցնել զինված ուժեր, դուրս գալ քաղաքից միայն պաշտպանության վերջին հնարավորությունները սպառելուց հետո…»[1]:

Ապստամբների գործողությունների ծրագիրը. որի կենտրոնում Նոր Բայազետի գրավումն էր, մշակել էր Հ. Սարուխանյանը: Տեղերում աշխատանքների կազմակերպումը և ղեկավարումն իրականացնում էին կուսակցական կազմակերպությունները: Քաղաքի վրա հարձակումը սկսվելու էր մայիսի 15-ին: Մինչ այդ՝ մայիսի 13-ի լույս 14-ի գիշերը, իշխանությունները ձերբակալում և Սևանա կղզի են արտաքսում բոլշևիկներ Հ. Զարգարյանին, Ս. Բոշնաղյանին, Պ. Պետրոսյանին, Մ. Դուրգարյանին[2] և այլոց:

Նշանակված օրը՝ մայիսի 15-ին, ապստամբները գրոհում են Նոր Բայազետի վրա և երկու օր անց՝ մայիսի 17-ին՝ օրվա երկրորդ կեսին, մտնում են քաղաք: Հեղկոմն իր ձեռքն է վերցնում իշխանությունը, իսկ մինչ այդ գրեթե բոլոր պաշտոնյաները լքել էին իրենց աթոռները[3]: «Հառաջ» թերթի տեղեկացմամբ՝ ապստամբները քաղաքը գրավելու ժամանակ թալանել են քաղաքացիներ Լևոն Թորգոմյանի, Վաղարշակ Պետրոսյանի, Սողոմոն Բուռնազյանի, Խաչատուր Առաքելյանի, Սիրական Ղազանչյանի և այլոց բնակարանները[4]:

Նոր Բայազետին տիրելուց հետո ռազմահեղափոխական կոմիտեն մտադիր էր գրավել նաև Ելենովկան ու ամրանալ Սեմյոնովկայի բարձունքներին՝ խնդիր ունենալով կապ հաստատել Ղազախ-Շամշադինի ապստամբների հետ: Պետք է նշել, որ այս ծրագիրը ոչ այլ ինչ էր, եթե ոչ միակողմանի և տեղական նախաձեռնություն, որն ապստամբներին ոգեպնդելու նպատակ ուներ, որը կարող էր միայն ձգձգել ժամանակավոր

---

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 147, թ. 8:

[2] Մ. Դուրգարյանը Բայազետի գավառի տարրական դպրոցների տեսուչն էր, ուսուցիչների շրջանում ստեղծել էր համակիրների մեծ խումբ: Նշանակալից դեր է կատարել քաղաքի և գավառի կուսակցական բջիջների ստեղծման ու ամրապնդման գործում: Գավառի փոխանորդ Եզնիկ վարդապետը հանրային կրթության նախարար Գևորգ Ղազարյանին հասցեագրված 1920 թվականի օգոստոսի 12-ի զեկուցագրում հետին թվով խոստովանում է. «Անշուշտ հայտնի կլինի Ձեզ, որբ տարրական դպրոցների տեսուչ Պ. Դուրգարյանը կուսակցական գործունեությամբ պրոպագանդա տարավ և դպրոցները լցրեց թերուս ուսուցիչներով, որոնք և մայիս ամսում տեղի ունեցած բոլշևիկյան շարժումների պարագլուխներ դարձան» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, դ. 185, թթ. 226-227): Մայիսյան ապստամբությունից առաջ գեներալ Մ. Սիլիկյանի կարգադրությամբ Մ. Դուրգարյանը վտարվեց Նոր Բայազետից, սակայն նախօրյակին վերադարձավ (տե՛ս նույն տեղում, թ. 177):

[3] Տե՛ս «Ժողովուրդ», 3. 6. 1920, «Հառաջ», 23. 5. 1920:

[4] Տե՛ս «Հառաջ», 23.5.1920:

հաջողությունների վախճանը: Փաստենք, որ ապստամբները նախահարձակ լինելուց առաջ չկարողացան հակառակորդին զրկել Ելենովկայի ճակատը լրացուցիչ ուժերով ամրացնելու հնարավորությունից: Մայիսի 17-ին Նոր Բայազետի ուղղությամբ փոխադրվեց գեներալ Խանքալամյանի հրամանատարությամբ մի հետևակային զորամաս՝ երկու թնդանոթով և հինգ գնդացրով: Հաջորդ օրը՝ մայիսի 18-ին, Երևանից ստացվեց նոր համալրում և տեղակայվեց Հաջիմուխան ու Աղզիբիր լքյալ գյուղերի շրջանում՝ ամրացնելով Ելենովկա տանող ճանապարհի պաշտպանությունը[1]:

Պաշտոնական մի փաստաթղթից տեղեկանում ենք, որ մայիսի 19-ի գիշերը կառավարական զորամասերի հրամանատարությունը գրավոր դիմել է ռազմահեղկոմի ղեկավար Հ. Սարուխանյանին՝ կարգադրելով չդիմադրել և զենքը վայր դնել: Նույն օրը Հ. Սարուխանյանը պատասխանել է, որ ապստամբները կռվում են դաշնակցականների տիրապետությունը տապալելու համար, և որ նրանց պայքարը վճռական է ու անհաշտ[2]:

Փաստորեն, նոր արյունահեղությունից խուսափելու՝ կառավարության ջանքերը հաջողություն չունեցան: Մայիսի 19-ի առավոտյան ապստամբական ուժերն անցան հարձակման: Կառավարական զինուժը նրանց հետ քշեց դեպի Աղկալա ու Աղզիբիր գյուղերի ուղղությամբ: Ապստամբների համար դրությունը գնալով ծանրանում էր, իսկ շարունակվող նահանջը կրում էր անկանոն բնույթ: Այդ են վկայում ապստամբների շարքերում ծայր առած խուճապային տրամադրությունների ու հուսալքության մասին ժամանակի մամուլի էջերում սփռված բազմաթիվ տեղեկությունները:

Կառավարական զորամասերն անցան վճռական հարձակման և առանց լուրջ դիմադրության հանդիպելու մայիսի 19-ի կեսօրին մտան Նոր Բայազետ: Ապստամբներն անձնատուր եղան: Քաղաքն ազատագրելու ժամանակ սպանվեցին մեկ զինվոր, չորս երեխա և ապստամբության երեք մասնակից[3]:

Նոր Բայազետին տիրելուց անմիջապես հետո բանտից ազատ արձակվեցին բոլոր սպաները (այդ թվում՝ գեներալ Մ. Սիլիկյանը), որոնք բանտարկվել էին ապստամբների կողմից[4]: Հակառակը, այս անգամ ձերբակալվեցին և բանտ նետվեցին ապստամբության ղեկավարներն ու ակտիվիստները, որոնց թվում էր Հ. Սարուխանյանը:

«Հառաջ» թերթը մայիսի 22-ի հրապարակման մեջ նշում է, որ ձերբակալման պահին Հ. Սարուխանյանի մոտ հայտնաբերվել են պետական

---

[1] Տե՛ս Հ. Կարապետյան նշվ. սշխ., էջ 197:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1. Գ. 147, թ. 8:

[3] Տե՛ս «Ժողովուրդ» 20.5.1920, «Աշխատավոր», 28.5.1920:

[4] Տե՛ս ժողովուրդ, 20.5.1920, «Հառաջ», 22.5.1920:

գանձարանից յուրացրած ամբողջ փողերը (1,5 մլն. ռուբլի)[1]: Ընդ որում, հետարքրիր է, որ նույն թերթի մայիսի 23-ի համարում ասված է. «Սարուխանյանի մոտ կար 1,5 մլն ռուբլի՝ փորձում էր փախչել: Դրամի կեսը գտնվել է մոտը»[2]: Հետևապես, ըստ «Հառաջ» թերթի տեղեկության՝ Հ. Սարուխանյանի մոտ մի դեպքում գտնվել է հափշտակած փողերի ողջ գումարը, մյուսում՝ դրա կեսը: Այս իրողությունը հիմք է տալիս ասելու, որ այդ տեղեկությունները պետք է վերապահումով ընդունել:

Տեղում իրավիճակի հետ ծանոթանալու և կարգը վերականգնելու նպատակով մայիսի 20-ին Նոր Բայազետ այցելեց զինվորական և ներքին գործերի նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը[3]:

Ապստամբության կազմակերպիչներից և առավել ակտիվ մասնակիցներից Գրիգոր Դադիկյանը, Սրապիոն Վարդանյանը, Ադիբեգ Նալբանդյանը, Բեգլար Մինասյանը, կապիտան Պետրովն արտակարգ դատարանի[4] վճիռներով մահապատժի ենթարկվեցին[5]: Առանց դատարանի վճռի գնդակահարվեց Հ. Սարուխանյանը[6]: Ավելի ուշ՝ հոկտեմբերին, գնդակահարեցին հիվանդությունից նոր ապաքինված Բ. Բատիկյանին[7]:

Այսպիսով, 1920 թ. մայիսյան ապստամբությունը, որի շարժիչ ուժը հիմնականում զինվորականությունն էր, անխուսափելի պարտություն կրեց, քանի որ ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ Նոր Բայազետի գավառում այն չուներ բավարար սոցիալական հենարան, որն ամենակարևորն էր: «Շարժումը խեղդվեց առանց մեծ դժվարությունների, որովհետև հենարան չուներ, երկրի համար բոլշևիզմը միանգամայն խորթ բան էր, իսկ դրսի միջամտություն չկար այդ ժամանակ»[8],- իրավացիորեն գրում է Հովի. Քաջազնունին:

---

[1] Տե՛ս «Հառաջ», 22.5.1920:

[2] «Հառաջ», 23.5.1920:

[3] Տե՛ս «Հառաջ», 22.V. 1920:

[4]Խորհրդարանը արձակուրդ ուղարկելու հաջորդ օրը՝ մայիսի 6-ին, նախարարների խորհուրդն ընդունեց ժամանակավոր օրենք «Արտակարգ դատարանի մասին»: «Արտակարգ դատարաններ» հիմնվեցին Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Նոր Բայազետում, Դիլիջանում:

[5] Տե՛ս Հ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 200:

[6] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 722: «Աշխատավոր» թերթի տեղեկացմամբ՝ Հ. Սարուխանյանը զինվորական դաշտային դատարանի վճռով գնդակահարվում է (տե՛ս «Աշխատավոր» 1. VI.1920):

[7] Տե՛ս Հ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 200:

[8] Հ. Քաջազնունի, Հ. Յ. դաշնակցությունը անելիք չունի այլևս, Երևան, 1994, էջ 31:

Խորհրդային Ռուսաստանից սպասվող ռազմական աջակցությունը չեղավ, մի կողմից՝ այդ երկրի արտաքին բարդ կացության պատճառով, մյուս կողմից էլ՝ նրա բոլշևիկ ղեկավարությունն այդ ժամանակ կարևորություն չէր տալիս Հայաստանի խորհրդայնացման հարցին:

Ապստամբությունն առանց մեծ դժվարության ճնշելու հանգամանքը կարելի է բացատրել նաև բոլշևիկների ելույթների ցրվածությամբ, միասնական կենտրոնի բացակայությամբ և Արմենկոմի թույլ տված մարտավարական այլ սխալներով ևս, որոնք, անշուշտ, ազդել են դեպքերի ընթացքի վրա:

Թեև ապստամբությունը ճնշվեց, բայց և այնպես այն կառավարությանն ու իշխանության մյուս օղակներին սթափվելու և անհրաժեշտ հետևություններ անելու տագնապ հնչեցրեց:

Ապստամբության պատճառները և հետևանքները դարձան իշխանության ու հանրության լայն քննարկման առարկա: Ճիշտ եզրակացության հանգելու համար անհրաժեշտ էր խորությամբ ուսումնասիրել հարցը: Ահա թե ինչու կառավարությունը հունիսի 8-ին ընդունեց օրենք «1920 թ. մայիսին Հայաստանի սահմաններում տեղի ունեցած խռովությունների պատճառները քննելու և վերացնելու միջոցները մշակելու նպատակով կազմված հատուկ քննիչ հանձնաժողով ստեղծելու մասին.

1. 1920 թ. մայիսին Հայաստանի սահմաններում տեղի ունեցած խռովությունների պատճառները քննելու և վերացնելու միջոցները մշակելու նպատակով կազմվում է հատուկ քննիչ հանձնաժողով:
2. Այն կազմվում է նախարարների խորհրդի կողմից նշանակված հինգ անձից՝ նախարարապետի կամ նրա կողմից նշանակված անձի նախագահությամբ:
3. Հավաքված նյութերից քննիչ հանձնաժողովը կազմում է զեկուցում, որի մեջ ներկայացնում է խռովությունների պատճառները և տալիս է իր եզրակացությունը: Հանձնաժողովն իր աշխատանքները վերջացնում է մինչև սույն տարվա օգոստոսի 30-ը»[1]:

Փաստորեն օրենքը կանխորոշում էր հանձնաժողովի կողմից բարձրացվելիք և ուսումնասիրվող հարցերի շրջանակները: Ինչ վերաբերում է հանձնաժողովի կազմին ու նրա գործունեությանը, ապա որևէ փաստաթուղթ մեզ հայտնի չէ: Ամեն դեպքում ակնհայտ է մի բան, որ տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում իրավիճակային փոփոխություններ դրական իմաստով չեն արձանագրվել, եթե չասենք, որ երկրի հետընթացը, լայն իմաստով, ավելի ու ավելի էր խորացել:

[1] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 153, թ. 51:

Այսպես, բռնագրավումների քաղաքականությունը, որը հանրապետության գյուղացիության թշվառության գլխավոր պատճառներից մեկն էր, շարունակվում էր, և դրա հետևանքով սոցիալական անտագոնիզմը գնալով խորանում էր: Ճիշտ է, ապստամբության ճնշումից հետո կառավարությունն անդրադարձավ այդ հարցին և մայիսի 24-ին ընդունեց «Հասարակության հացի անմիջական կարիքները հոգալու մասին» օրենքը, որով մասնավոր անձանց ի գիտություն հայտնվում էր նրանց պարտականությունների մասին. այն է՝ 1. ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի մինչև սույն տարվա օգոստոսի 1-ը իրավունք ունի հին հունձքից իր մոտ պահելու ընտանիքի ամեն մի շնչին երեք փութ հացահատիկ (հատկացվում է ցորեն, գարի, հաճար, բրինձ, եգիպտացորեն) կամ ալյուր: 2. Ով այս քանակից ավելի հացահատիկ կամ ալյուր ունի, յուրաքանչյուր վայրում սույն օրենքը հրապարակելու օրից սկսած՝ երկու շաբաթվա ընթացքում, պարտավոր է հայտնել տեղական կոմիսարին: 3. Ավելի հացահատիկը կամ ալյուրը հանձնվում է կառավարությանը, որի փոխարեն կառավարությունը պարտավոր է վճարել կա՛մ դրամով, կա՛մ հունձքից հետո հացահատիկով[1]:

Այս օրենքը, ըստ էության, փոքր-ինչ կարող էր մեղմել գյուղի վիճակը: Նույնը կարելի է ասել կառավարության մյուս ձեռնարկումների մասին:

1920 թ. հունիսի 25-ին «Աշխատավոր» թերթը գրել է. «Սակայն մինչև օրս Հայաստանի կառավարությունը այս ուղղությամբ շատ քիչ, եթե չասենք բնավ՝ ոչինչ չի արել»[2]՝ հավելելով, որ Հայաստանի կառավարությունը պարտավոր է օր առաջ զբաղվել այդ կարևորագույն խնդիրներով՝ վերաքննել նախկին աշխատանքները, պետական մարմինները մերձեցնել աշխատավորական զանգվածներին, հեռացնել պետական ապարատից ժողովրդի շահերին անհամապատասխան կաշառակեր ու ապիկար ծառայողներին և այլն, եթե ուզում է իր հետ ունենալ աշխատավորության համակրանքը[3]:

Հայաստանի Հանրապետությունը մարտադաշտում և դիվանագիտության ասպարեզում արձանագրեց մեծ ձախողումներ: Արդյունքում 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանի Հանրապետությունից Թուրքիային էր անցնում 20,7 հազար կմ^2 տարածք, իսկ Նախիջևանի, Շարուրի և Շահթախթիի շրջանները ժամանակավորապես դրվում էին Թուրքիայի հովանավորության տակ[4]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, դ. 116, թ. 37:

[2] «Աշխատավոր», 25.VI.1920:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս, օրինակ, Ա. Հակոբյան, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, էջ 92-93:

Նույն ժամանակ ստորագրած Երևանի պայմանագիրը հանգեցրեց վարչաձևի փոփոխման: Երկու օր անց Կարմիր բանակի զորամասերն առանց դիմադրության մտան Երևան: Ընդհատվեց հայոց անկախ պետականության շարունակականությունը: Հայաստանն արդեն խորհրդային էր:

Հայաստանի խորհրդայնացումից մեկ շաբաթ անց՝ դեկտեմբերի 8-ին, Երևանի «Կոմունիստ» թերթը մայիսյան ապստամբության հետ կապված իրադարձությունների վերաբերյալ հոդված տպագրեց: Հոդվածում դեպքերի ընդհանուր նկարագրության հետ մեկտեղ խոսվում է նաև ապստամբության պարտության ու հետևանքների մասին, և այդ համատեքստում արվում է հետյալ եզրահանգումը. «Եվ եթե մայիս ամիսն Հայաստանի հեղափոխական աշխատավորությունը հաղթող դուրս գար, Հայաստանը չէր կրի այն սարսափելի կորուստները, որի հերոսները, այսօր թալանը գրկած փախչում են Հայաստանի սահմաններից, որ խորհրդային դառնալուց հետո կորցրել է իր ամբողջ հմայքը «ազգային գործիչների» ու «կործանիչների» համար»[1]: Խոսելով ապստամբության անկազմակերպ բնույթի մասին՝ հեղինակն ավելացնում է, որ աշխատավորության պարտությունը դուռ բացեց այն բոլոր դժվարությունների ու պարտությունների առջև, որ անցան Հայաստանի գլխով մայիսից մինչև դեկտեմբեր[2]: Հոդվածի ենթատեքստից հասկանալի է՝ եթե հանրապետության կառավարիչները վեր կանգնեին իրենց անձնական կամ խմբային շահերից և հայ ժողովրդին չդիտեին որպես այդ շահերին հասնելու միջոց, իսկ հայ դիվանագետներն էլ իրենց քթից հեռու տեսնեին, ապա Հայաստանը տարածքային նոր կորուստներ չէր ունենա: Այլ խոսքով՝ Հայաստանն այսօր Ղարաբաղից և Նախիջևանից բացի իր կազմում կունենար Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը:

Միաժամանակ կարևոր ենք համարում ընդգծել, որ Մայիսյան ապստամբությունը ՀՀ իշխանությունները ճնշեցին՝ կատարելով դաշնակից երկրների պատվերը: Այս հարցին պատասխանելուն օգնում են կառավարությանն Ա.Ահարոնյանի ուղարկած նամակները, որոնցից հարկ եմ համարում մի քանի մեջբերումներ կատարել: 1919թ. օգոստոսի 8-ի նամակում Ա.Ահարոնյանը Ա.Խատիսյանին գրում է. «Սիրելի Ալեքսանդր Իվանիչ, ասա ընկերներին, նաև մեր թերթի վարիչներին, որ առայժմ գոնե պատճառներ չտան այդտեղի օտար ներկայացուցիչներին գրել իրենց կառավարություններին, թե դաշնակցականները բոլշևիկներ են…Խնդրում եմ նկատի առնել, որ ոչինչ մեզ այնպես չի վնասի, որքան բոլշևիկ կամ ծայրահեղ լինելու հռչակումը»[3]:

---

[1] «Կոմունիստ» (Երևան), 8. 12. 1920:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս «Դաշնակցական կառավարության դոկումենտներից», Երևան., 1922, էջ 26:

Պատմագրության մեջ նաև հակառակ կարծիք կա, ըստ որի՝ անկախ այդ ամենից, միևնույն է՝ բոլշևիկյան Ռուսաստանը հանուն իր աշխարհաքաղաքական ծրագրերի կանխորոշել էր տարածքային այն լուրջ զիջումները, որոնք հետագայում արվեցին Թուրքիային ու Ադրբեջանին:

Մենք ավելի շատ հակված ենք առաջին տեսակետին և կարծում ենք, որ ապստամբության հաղթանակի դեպքում շատ հարցեր այլ կերպ կլուծվեին: Այնուհանդերձ, գտնում ենք, որ նման հիմնահարցին մակերեսային և օրախնդիր մոտեցումն անընդունելի է: Հարցի փաստառատ, խորը ու հիմնավոր ուսումնասիրությունը միայն կարող է կողմնորոշիչ լինել դրա ներքին տրամաբանության վերհանման և գնահատության ժամանակ: Անշուշտ, սա առանձին ուսումնասիրության թեմա է:

Այսպիսով, արձանագրենք մայիսյան ապստամբության պատճառը Հայաստանի Հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր կացությունն էր և տիրող անօրինականություններն ու իրավախախտումները, հայ բոլշևիկների (ռուսական բանակի մուտքն Անդրկովկաս և Ադրբեջանմի խորհրդայնացումը ոգևորել էր նրանց) միջոցով բնակչության դժգոհություններին հասարակական-քաղաքական ակտիվություն հաղորդելը:

Քննարկելով ՀՀ իշխանությունների թույլ տված կոպիտ սխալները, չպետք է մոռանալ, որ այդ սխալները երբեմն պայմանավորված են եղել այդ իշխանությունների ծանր վիճակով, որ նրան պարտադրել էին արտաքին մարտահրավերները:

Բանալի բառեր՝ *խորհրդահայ պատմագիտություն, մայիսյան ապստամբություն, դասակարգային պայքար, դաշնակցական կառավարություն, Նոր Բայազետ:*

NEW BAYAZET IN THE CONTEXT OF MAY UPRISING IN 1920

H. M. HARUTYUNYAN
Doctor of Historical Sciences
Professor, Head of GSU Chair of History

The internal policy of the Government of the Republic of Armenia, the terror approved by the Mauserists and the headsmen completely exhausted the people. The speeches of the Armenian workers and the rural inhabitants in particular against the current authorities, reached a large scale especially in the second half of 1918. The center of the uprising was Alexandropol. The example of Alexandropol was followed by Ijevan, Kars, Sarighamish, Dilijan, Goris and New Bayazet. In New Bayezet, a military revolutionary committee was formed and took power into the region on May 17. On May 19, government forces entered the New Bayazet and suppressed the uprising.

НОВЫЙ БАЯЗЕТ В КОНТЕКСТЕ МАЙСКОГО ВОССТАНИЯ 1920г.

Г. М. АРУТЮНЯН
Доктор исторических наук, профессор,
заведующий кафедрой истории ГГУ

Внутренняя политика Правительства РА, утвердившийся террор маузеристов и хмбапетов полностью истощили народ. Выступления рабочих, в частности сельских жителей Армении, против действующей власти достигли особо крупных масштабов во второй половине 1918г. Центром восстания был Александрополь. Примеру Александрополя последовали Иджеван, Карс, Сарыкамыш, Дилижан, Горис и Новый Баязет. В Новом Баязете был сформирован военно-революционный комитет, который 17 мая взял в свои руки власть в области. 19 мая правительственные силы вошли в Новый Баязет и подавили восстание.